ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1019-Ա « 20 » մարտի 2025թ.

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 53-րդ կետերի պահանջներով.

1.Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքերին տրամադրել հասցեներ՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին սույն որոշման օրինակները 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել վարչական շրջանների ղեկավարներին, Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժինների պետերին և դիմողներին:

3.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա. Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
20.03.2025թ.
հ.1019-Ա որոշման

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Հ.	Դիմողը	Անշարժ գույքի գտնվելու վայրը	Անշարժ գույքի տեսակը	Տրամադրվող հասցեն	Հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը	Փոստային դասիչը
1	2	3	4	5	6	7
1	Գարեգին Ալեքսանյան /լիազորված անձ/ Հակոբ Ղազարյան	Նոր Արեշ 35-րդ փողոց, հ.48	հողամաս	Հողաբաժանման 07.11.2002թ. հ.1-6487 պայմանագրով, Հակոբ Ղազարյանին անցած Նոր Արեշ 35-րդ փողոցի հ.48 հասցեում գտնվող 170.5քմ մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ Նոր Արեշ 35-րդ փողոց, հ.48/1	01053J6UMU8Z	
2	Հայկ Թադևոսյան /լիազորված անձ/ Ռուբեն Շախմուրադյան	Թբիլիսյան խճուղի, հ.21/9 և հ.21/10	հողամաս	Ռուբեն Շախմուրադյանին սեփականության իրավունքով պատկանող, Թբիլիսյան խճուղու հ.21/9 և հ.21/10 հասցե-ներում գտնվող հողամասերին /վկ. հ.21062017-01-0027 և հ.21062017-01-0031/ ըստ միավորման հատակագծի տրա-մադրել մեկ միասնական հասցե՝ Թբիլիսյան խճուղի, հ.21/9	010338MXVVRE	
3	Սարգիս Բարսեղյան /լիազորված անձ/ Բագրատ Հովհաննիսյան	Մ. Սարյան փողոց, հ.24 շենք, հ.23-24	բնակարան	Բագրատ Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող, Մ. Սարյան փողոցի հ.24 շենքի հ.23-24 հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ.30072021-01-0079/ բաժանման հատակագծով առանձնացվող 86.01քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Մ. Սարյան փողոց, հ.24 շենք, բն.23/1	01063ZNNR5GM	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ